ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 7 մայիսի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Հ. Նազարյանի
Անդամակցությամբ՝ Մ. Թոփուզյանի
Ա. Խաչատրյանի

Ուսումնասիրելով «Նոյյան տապան» ՍՊԸ-ի դիմումով գործը
քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «Նոյյան տապան» ՍՊԸ-ն դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30.2 հոդվածի 18-րդ եւ 19-րդ պարբերությունները ճանաչել ՀՀ Սահմանադրության 8, 18, 19, 31, 42, 45 հոդվածներին հակասող եւ անվավեր»:

1. Դիմողի կարծիքով՝ վիճարկվող դրույթների եւ ՀՀ Սահմանադրության 18, 19 հոդվածների միջեւ հակասությունը դրսեւորվում է նրանում, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքը, հարկատու-հարկահավաք հարաբերություններում նախատեսելով պարտավորությունների կատարման արտադատարանական մեխանիզմ, միաժամանակ չի բացառել ցեսիայի պայմանագրի գործողության ժամկետում հարկային մարմնի կողմից հայցով դատարան դիմելու հնարավորությունը:

Դիմողը գտնում է, որ ցեսիայի պայմանագրերի կնքմամբ հարկային պարտականությունները կատարելու համար հարկային մարմնին պահանջի իրավունքի զիջման պահից

հարկային մարմինը ցեսիայի պայմանագրերի գործողության ժամկետում պետք է զրկվի դատական հայցով համապատասխան հարկային պարտավորությունները գանձելու հնարավորությունից, քանի որ բացակայում է «իրավունքի խախտման» փաստը, հետեւաբար չկա դատական պաշտպանության հնարավորությունը:

Ըստ դիմողի՝ օրենսդիրը պետք է ելնի այն կանխավարկածից, որ ցեսիայի պայմանագրով պահանջի իրավունքը զիջելիս, առնվազն այդ պայմանագրերի գործողության ժամանակահատվածում, զիջված պահանջին համարժեք պարտավորությունների մասով կետանց, իսկ հարկային մարմնի համար համապատասխան մասով խախտում գոյություն չունի:

Դիմողի կարծիքով՝ վիճարկվող դրույթներն առաջացրել են իրավական անորոշություն եւ պայմաններ ստեղծել վիճարկվող դրույթների կամայական եւ տարածական մեկնաբանման ու կիրառման համար:

2. Ելնելով դիմումի եւ կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից, դատական կազմը գտնում է, որ առկա չեն դիմումի քննությունը մերժելու հիմքեր, քանի որ դիմողը պահպանել է սահմանադրական դատարան դիմելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով սահմանված պայմանները, այն է՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ ՀՀ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ եւ 69-րդ հոդվածների պահանջներով, սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Նոյյան տապան» ՍՊԸ-ի դիմումով գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

7 մայիսի 2013թ.
ՍԴԴԿՈ/1- 12